

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

(Արտասանչալ ի լսարանի Կրթասիրաց ընկերության  
ի Սկչուտար ի 26 մայիսի 1879)

Տյարք և տիրուհիք.

Երբ Կրթասիրաց ընկերության գործադիր ժողովույն հրավերը պատվեց զիս՝ այս երեկո բանախոսելու առաջարկությամբ, ազատ թողված էր բանախոսության նյութը. այլ բնական հարկ մը կայր իմ վրաս, այն է ազգային նյութը մը վրա ճանել ազգասիրաց գումարման առջև: Մակայն ընդարձակ է ազգային նյութոց ասպարեզը և հոն ամենայն ոք միշտ նորանոր կետեր կգտնա. այսչափ ատենաբանք ազգային նյութերու վրա կխոսին առանց իրարու գրուցածը կրկնելու: Զեր Ընկերության անունը, տյա՛րք, որ այս գրական հանդիսից հաստատության և հառաջադիմության հետամուտ եղև և է, իմ մտացս դիմացս ելալ. կրթասեր հրավիրակքն, կրթասեր ընկերքն, կրթասեր ստուգիվ և ունկնդիրքս, մանավանդ թե ըսեմ բովանդակ իսկ բնակիչք երրակի թաղից հնո Ոսկեքաղաքիս, ուր է հայության կեդրոններն մին, ոչ թե թվովն միայն այլ և ըղձյութն և ջանյութ: Բայց ի՞նչ է գոր կրթել կսիրեք կրթասերքդ, ոչ ասպարե՞ն հայն. վասն զի ազգային է հաստատությունը և ազգայինն նպատակդ:

Այս նպատակին հետևությունն է լավ ճանչնալ առարկայն գոր կրթել կսիրեք. իսկ առարկայն գոր պիտի կրթեք՝ մարմին մի է բարոյական, ազգ մը, որ յուր գոյու-

թյունը գիտե արտաքին պարագայից հարաբարության մեջ. իսկ յուր էությունն հոգեկան հատկությանց հարաբերությանցը վրա հաստատույալ է: Դուք որ ձեր ազգը, հայությունը, կրթել կսիրեք, սույն հայության ինչ ըլլալը պետք է որ լավ գիտնալք և խորունկ իմաստասիրեք, ուստի և ի՞նչ ուրիշ նյութ կրնալք ունենալ ձեր զննությանց՝ եթե ոչ հայության հոգին, որ է ամենայն հայոց հոգեկան հարաբերությանց բովանդակությունը: Ահա, ունկնդի՛րք իմ սիրելիք, ինչ մտածմունքով որոշեցի սույն նյութին վրա ճանել այսօր, կարծելով այսու ոչ թե իմ ներքին բաղձանացս հագուրդ միայն տալ, այլև ճշտիվ այդ լսարանիս հաստատության և նպատակին համապատասխանել, և անոր սահմաններուն մեջ մնալ: Այլ որովհետև հայության հոգվույն վրա խոսելն՝ կրնա մեզ նաև իմաստասիրական և քաղաքագիտական խնդրոց խորերը սուսնորդել՝ գործնական խնդիրները մոռցնելով, կուզեմ այժմեմ հայտնապես զեկուցանել թե տեսական խնդրոց ասպարեզը օտար է բոլորովին իմ նպատակես, և պիտի աշխատիմ գործնական և գործադրական խնդրովք զբաղեցուցանել ձեր ունկնդրությունը: Անցավ այն ժամանակը, երբ մեծ ինչ կկարծվեր վերացյալ խնդրովք միտքերը հոգնեցնել և անիմանալի ճշմարտությանց մեկնությանք ճողոմարանել. այսօր գործո ժամանակ է, և ատենաբանքս իսկ այդ հարկին պետք է հպատակիմք:

\* Կոստանդնուպոլիս, տպագրություն Պ. Բիրիշեճյան, 1879 թ.:

Եթե բարոյական մարմնո մը հոգին յոր անհատից ընդհանուր եղած հոգեկան հատկությունն է, որենն հայրությանն բովանդակությունն է, որենն հայրությանն ալ հոգին ասեն հայ անհատի սեփական հոգեկան հատկությանն, և հայ անհատներու իրարու մեծ հարաբերությանն բովանդակությունն է: Թեպետ և այդ հատկությունը և այդ հարաբերությունը մասնավոր դեպքեր և մասնավոր գործեր են, բայց անոնցմե ընդհանուր բարոյական օրենք մը հատաչ կուգա, ինչպես մասնավոր բնական դեպքերն և երևույթներն ընդհանուր բնական օրենք մը կհետևեցնեն բնագիտության իմաստունները: Այդ օրինաց հետևելով բնագիտությանն մասն բարոյագիտություն մը ի յույս եկած է, և ինչպես բնագիտությունը յոր օրենքը և յոր իմաստասերները ունի, ասանկ ալ բարոյագիտությանն օրենք և իմաստասերք կան: Բայց բարոյագիտությունը առհասարակ մարդկության վրա կխոսի, շատ կընդհանրացնե յոր սկզբունքը՝ զննությունը և օրենքը, որպիսով կարենա ի մի միացնել և լծորդել ամեն մարդիկ, անխաջրհեղեղյանը և այժմյանը, հնաշխարհիկը և նորաշխարհիկը, գարգացյալը և կիսավայրենին, հրեայն և հեյլենը, հայը և ոչ հայը: Մեք այդչափ ընդհանրության պետք չունինք. մարդկային սեռին ալնչափ ցեղերեն մեկ հատը միայն առարկա կուզենք ընել մեր զննությանն, որ տեսակ մը ազգագիտություն կըրնա կազմել, կամ ճիշտ ևս հայագիտություն, եթե գիտնականաց խիղճը կներե աշխարհի զննությանն գիտության անուն տալ: Բայց ինչո՞ւ չներե, ցորչափ մեր այդ զննությունը ալ գործերու վրա կհիմնվին, սկզբունքներով կիմաստասիրվին և օրենքներու հաստատությանն կառաջնորդեն:

Դեպքերը և գործերը, որք կարծես թե մեր բարոյական և ազգային մտավորական աշխարհին երևութներեն են, էս բոլորովին իսկ մեկ կողմ կթողում. հայտնի կենթադրեն բոլոր իմ ունկնդրածս մեր ազգային պատմությանն հիշատակները, և մեր ներկա ազգային դրից պարագայները: Ասոնք են մեր գիտությանն հիմունքն:

Եվ որպեսզի ընդ վաշտավարծ չկարծվիմ, շտաով կուզեմ հավելոյ թե ո՛չ այստեղ և այսօր մեք առաջին անգամ այդ հիմունք վրա հաստատույալ բարոյական իմաստասիրությունը պիտի կատարենք. և ո՛չ թե մեք անճանոթ գիտության մը անճանոթ օրենքները գաղտնության խորներն ի յույս պիտի նանենք. և ո՛չ իսկ ի յոր աշխարհի անլուր բաներ պիտի խոսինք: Անեն հայ անհատ, որ քիչ-շատ յոր ազգին պատմության տեղակ է, որ քիչ-շատ յոր աչքին ներքև հանդիպած ազգային գործոց վրա կխորհրդա-

ծե, մեկեն կսկսի անոնց հարաբերությունեն Բեռնություն մը հանել, և իսկույն իսկ վրձնել թե հայն այսպես կամ այնպես է, և նույն ժամուն բերման համեմատ՝ կամ երկնաչափ բարձրացնել զայն և կամ ինչվան անդնոց խորերը իջեցնել: Այսպիսիներեն շատեր իրենց գաղափարը նաև գրով և հրատարակությամբ ամենուն ծանոթացնելու աշխատած են:

Այս տեսակ խոսից և գրությանց վրա ընդհանուր ակնարկ մը նետելով կտեսնամք, որ անոնք որ հայը կգովեն, ավելի բանաստեղծական արդյանց վրա կհիմնեն իրենց խոսքերը. և իրենց մտաց աշխույժը շարժողը՝ ավելի Եդենական դրախտն է, Մասաչս սարը, Նոյան աղալվին, պայծառ երկինքն, դաշտաց բուրմունք, դյուցազնական վեպք, Գողթնյան պուտեք, Եփրատու ափունք, Երասխա հորձանք և այլ սույնպիսիք. քանթե բուն բարոյական արդյանց պարծանք: Մանավանդ թե նոքա որ այս վերջին դիտակետեն ներքև կխոսին կամ կգրեն, ո՛րչափ տարբեր ո՞ն կգործածեն, ո՛րչափ վայեր կկարդան, ո՛րչափ ողբեր, ո՛րչափ սագտանք, ո՛րչափ ամբաստանությունք: Նոր Խորենացիներ և Լաստիվերտցիներ, իրենց աղիողորմ հեկեկանոք ամենուն ականջը կլեցնեն:

Ջանազանություն մըն ալ դիտած եմ, և կուզեմ զայն ևս ձեզի հաղորդել: Որք հայուն վրա կխոսին, իրենք ալ հայ ըլլալով, թեպետև հայուն անձնական կարողությանն և կատարելությանն ալ պարտուպատշաճ գովեստը ընծայեն, թեպետև լիաբերան վկայեն յոր մտաց ընդարձակությունը, բնական աշխույժը, գործունյա բնավորությունը, մարդասեր վարմունքը, և այլ աղեկ ձիրքերը, մեկեն կհավելուն թե ավա՛ղ որ մերազգիք չեն գիտեր այս գեղեցիկ հատկություններեն արժանավոր արդյունքն քաղել, և այդչափ երջանկության հասնելու կարողություն ունենալով՝ հանդերձ՝ դժբախտ են իրենց իսկ հանցանքով, ո՛չ միություն ունին, ո՛չ չափավորություն, ո՛չ արիություն, ո՛չ հարաստություն: Ի՞նչ բախտեր, կըսեն, չանցան մերայնոց ձեռքը. ի՞նչ պայծառ ժամանակներ չունեցանք մեք պատմությանն մեջ. այլ վա՛շ մեզի որ մեք մեր ձեռոք զմեզ կործանեցինք. մատնիչներ մեր մեջեն իսկ ելան, անձնասերք ազգը ընդունեցին, և անմիաբանությունը իրեն ներքին ուժը փտեցուց: Ասոնց համար Մեհրումժան Սթորունին, Վասակ Սյունին, Վեստ Սարգիսն և նմանիք՝ հայությանն հրեշներ չեն, վասն զի մատնությունը և անմիաբանությունը կարծես թե հայ հոգվույն բնական կընեն: Միթե սովորական

իսկ եղած չէ՞ մեր խոսից մեջ կրկնել թե հայ ըսել անմիաբան ըսել է. թե հայոց մեջ անենայն ոք առաջին ըլլալ կուզե, իսկ երկրորդը և ոչ ոք. թե հայք ամեն դժվարությունեն կվհատին. թե հայք սկսիլ գիտեն, բայց պահպանել և հառաջ տանիլ չեն գիտնը:

Եթե այդ ամեն բացատրությունը ստույգ էին, և եթե իրականությունն ալ այդ էր, պետք էր ուրեմն որ ցավով արտի և արտասովալից աչոք խոստովանեինք էթե հայության հոգին ընտիր բան մը չէ, և բնական ընթացքով ալ այդ հոգիեն աղեկ բան մը սպասելու չենք. և որովհետև այդ հոգին է որ մեզի պիտի առաջնորդե, որով պիտի գործենք, ուստի պիտի օգտինք, չուզելով իսկ պետք էր որ գլուխնրս ծռեինք այդ բարոյական հարկին ներքև, որ բնական հարկին պես գորավոր է, և, բերանս իսկ առաջ չերթար ըսել, պետք էր որ ընդունեինք թե հայքս աղեկ ապագա մը չունինք:

Ստույգ են թե ձեզմե ոչ ոք իմ բերնեւ աչքսիսի խոսքեր լսել կսպասե. և թե այս վարկենիս մեջ շփոթ գաղափարներ ձեր միտքն ալ գրաված են: Հետևությունը ընդունիլ կդժկամակիք, և հայտնապես ըսեմ, թե կդժկամակիմ և ես. իսկ նախընթացները ժխտել չեք համարձակիր բոլորովին, վասն զի դուք ալ թերևս ստեպ-ստեպ կըրկնած եք այն սոցտանքները, զորս մեծ ինչ ընել կարծելով կհեղհեղեն շատեր: Իսկ ես ճշտիվ այդ կետը պարզելու համար հայության հոգվույն վրա ճանել որոշեցի ձեզ առջև: Հայության հոգվույն մեկ մասը մեր յուրաքանչյուրի ներսն է, և մեզմե շատերուն հոգին ինչ կերպ է, այն է հայոց մեծամասնության հոգին, և հայության հոգին ալ հայոց մեծամասնության հոգին է: Կըզգամք դուք ձեր ներսը այնպիսի հոգի մը ուսկից բոլորովին մերժված ըլլան միաբանությունը, չափավորությունը, արիությունը և հարատևությունը: Ուրեմն էթե դուք այսպիսի հոգի մը չեք զգար, և կարծեմ թե այս կետիս մեջ ոչ ոք կըլլա իմ խոսքս ստել, ինչո՞ր կիտոյաք ձեր ազգայնոց ընդհանրության հոգին ամբաստանել: Ինչո՞ր, հայե՞ր և հայոհիներ, ինքզինքնիդ իբր բացառություն ենթադրելով, հոծարական եք ընդհանրությունը մեղադրել: Եթե իմ կարծիքս կ'ուզեք լսել, ես պիտի պաշտպանեմ իմ ազգս. իմ կարծեացս համեմատ հայության հոգին անանկ անպիտան չէ ինչպես ոմանք կը կարծեն. ես ավելի մեծ գաղափար մը ունիմ իմ ազգիս վրա. և երջանիկ կսեպեի ինքզինքս էթե կարենայի իմ կարծիքս ընդհանրացնել, և անոնց որ ավելի խիստ են հայության հոգին դատելու մեջ:

թե ոչ համոզողությունը, գոնե բարեմիտ ընդունելությունը շարժել:

Հոս ներքի ինձ բանի մը խոսքով զարտություն մը ընել, ի պատասխանի այն քննադատին որ զիս քիչ ազգասեր գտալ էրք ուրիշ լսարանի մը մեջ խոսած ատենս հայուն անցյալը համետու գունեթով նկարեցի: Այն քննադատը, որ ոք և իցե, օտարագոյի հեղինակաց կարծիքներուն կրկնակնող մը և հայուն անցելույն վրա հարևանցի ակնարկ նետող մը դատեց զիս: Ես լռեցի, վասն զի իմ բերանս չէր կրնար անձիս համար վկայել. սակայն ավել մեծ պատճառ մըն ալ կայր իմ լռությանս. ես եղելույսնց վրա կխտեի, իմ քննադատս կալույթյանց ինձ կպատասխաներ. ես կըրեիլիությունս ինձ կպատասխաներ. թե նա, թե չեղավ, նա կպատասխաներ թե կրնար ըլլալ. և այսպես ճշդիվ խոսելով, նա հավեա իմ խոսքս հաստատած կըլլար ի մասին եղելության, քան թե ժխտած: Ապա թե ոչ ուր կարողության և անհատական ձրից խնդիր ըլլա, կարծեմ թե պարտուպատշաճ մեծարանաց պարտքս վճարած եմ հիշյալ բանախոսությանս մեջ, և այս ալ ներքին և խորին համոզմանս հետևությունն է, ուստի վարչալ և որով վառչալ այսօր ալ հայության հոգվույն վրա խոսելով, կհամարձակիմ հաստատել թե իզուր կամբաստանվի նա իբրև գուրկ ի միաբանությունեն, ի չափավորությունեն, հարիությունեն և ի հարատևությունեն:

Ի՞նչ ըսեմ ուրեմն գործոց և դիպաց դեմ. վասն զի ես ալ գիտեմ թե իմ դիմացս պիտի դրվին շատ մը գործեր և շատ մը դեպքեր, հորս անկեղծաբար խոսելով՝ հայությունը յուր վրա ո՛չ գուլետ կրնա հրավիրել և ո՛չ համակրություն. մանավանդ ըսեմ, առիթ ալ կուտա որ յուր վրա բարոյվին այն անդր ամբաստանությունները զորս ի վեր ազնոր հիշատակեցի: Գործերը և դեպքերը միշտ ծանոթ կենթադրեմ իմ ունկնդրացս, որով ավելորդ կըլլա մանբամասնություններ հառաջ բերել, որոնք սակավաթիվ ալ չեն. մանավանդ Արշակունյաց և հագրատունյաց ժամանակ, և պարսից և հագարացվոց տիրապետության ներքև: Ո՛վ չարտասովեր կարդալով որ հայ ձեռքեր հայոց թագր օտարին կհանձնեն, և հայ նախարարք Արտաշիր մը և Գագիկ մը արքունի գահեն իջեցնելով պարսից և հունաց ձեռքը գերի կմատնեն: Ապաքեն եպերեի հանցանք և անարգության պատճառք. որք և չեն դարձրի երբեք սալտ մը ըլլալ այն ազգին և այն աշխարհին որուն մեջ այդպիսի աններելի ոճիրք գործվեցան: Սակայն կխնդրեի, որ փոս կենար հետևությունը, և ալ ավելի առջև չանցնեք, և ոչ իսկ փաստ մը ըլլար ըսելու. տեսե՛ք հայության հոգին. տեսե՛ք հայ

հոգվույն արդյունքն. տեսե՛ք թե ինչ են հայերը: Այդ հետևությունն կարի իսկ խիստ է, և գործ մը ինչչափ ալ ծանր ըլլա չբավեր ընդհանրության մը կերպը և հոգին կազմել: Այս ըսելով կհիմնեն խոսքս ազգաց պատմության վրա, և ի ներկայիս իսկ զանազան ազգաց և պետությանց մեջ հանդիպած դեպքերուն վրա:

Գեշ և տգեղ գործեր մեր առջև կդնեն հայոց պատմությունը, անմիաբանության արդյունք եղող կերպ-կերպ արկածներ մեր հայրենիաց վրա հասան, արդի ժամանակաց մեջ ալ կրնանք զանազան գործեր և պատահումներ մեր առջև բերել, որոց վրա տըխրելու և ամչնալու տեղի ունիմք:

Ի՞նչ ուրեմն. միթե հայոց պատմությունն է միայն որ աշդայիսի թուխ կետեր կպարունակեն. միթե հայերն են միայն որ աշդայիսի հանցանաց պարտավոր գտնված են երկրիս վրա. կամ թե ներկա ժամանակաց մեջ ալ հայերն զատ ուրիշներ չկա՞ն որ հավասարապես նույն տեսակ ամբաստանությանց կրնան ենթարկվի: Պատմությանց փոքրիշատե տեղյակ լինելով, ելրոպացի ազգաց մեջ փոքրիշատե բնակելով և ճանապարհորդելով, և ժամանակակից դիպաց և տեղեկությանց զբաղելով, կրնամ համարձակ խոսիլ և հաստատել թե գրեթե պատմություն չկա որ յուր անվան անարգանք ատթող գործեր չունենա. պետություն չկա որ զըջալու ամիթ եղող պատահարներ չողբա. և հիմակ ալ ամեն տեղ և ամեն կողմ հակառակությունք կտիրեն և ընդդիմությունք կթագավորեն: Ամենն ավելի գորավոր և իմաստուն և խոհեմ կարծված ազգաց մեջ այնպիսի բաժանումք և հերձվածք կտիրեն, որք ինչվան ազգին և պետության հիմանց հաստատությունը կվրտանգեն: Աշվնիս գոց բռնելով՝ սնապարծ կրնամք ըլլալ, վասն զի մեր արդյունք չափազանց աղել կերևին մեզի. բայց նույնպես ալ աշվնիս գոցելով ի զուր ամբաստանող կըլլամք, վասն զի թերությունք չափազանց մեծ կսկսին երևիլ մեր աչքին:

Այդ կետին վրա երկար խոսելով բուն նպատակես կհետանամ և երբ հայության հոգին կուզեն իմացնել և ըստ կարի պաշտպանել, հանկարծ ինքզինքս ընդհանուր պատմությունը իմաստասիրելու վրա կգտնեմ: Ինչ որ բախդատության ուժը ինձ կթելադրե, հասարակ պետք է ըլլա ևս ձեզ՝ որք զուրկ չեք պատմական և լրագրական ծանոթություններ: Որոց որ գայթակղելով կնային մեր միջնադարյան ժամանակաց անտեղությանց վրա, հիշեցուցե՛ք անգամ մը ելրոպական լատին և գերմանացի ազգաց միջին դարերու պատմությունը. ինչպե՞ս օտարաց ձեռն տալով սեփական թա-

գավորություննին կտապալեին. ինչպե՞ս տեսակ-տեսակ բռնությանց ջատագով կկանգնեին. ինչպե՞ս ամեն ազգ ի ծվենս պատառյալ հարյուրավոր և հազարավոր իշխանությանց կբաժնվեր. ինչպե՞ս համազգի և համարյուն եղբարք իրերաց արյամբ սրակյալ ի խնջույս կբազմեին. ինչպե՞ս ժողովուրդ բռնավորաց հաճոյից խաղալիք էր և գերի. ինչպե՞ս ամենն ազնիվ զգացմունք տեղի կուտային մոլի և մոլեռանդն կրից, և ամենն անճումնի և անպիտան գաղափարներ ուղղություն և արդարություն կսեպվեին:

Սակայն ես հայության հոգվույն ջատագովության համար, ունիմ ևս ստալել գորավոր փաստ մը, որուն վրա կհրապարակեմ ամենն ավելի անաշտ քննաց նկատողությունը: Ազգ մը որ կա, և կա ոչ իբր պատմական հիշատակ, այլ իբր կենդանի և քաղաքական կենոք ճոխացյալ ազգ մը, յուր աղ կացության համար երկու պատճառաց միայն պարտավոր կրնա համարվիլ. կամ արտաքին հաջողությանց կամ ներքին հատկությանց: Արտաքին հաջողությունք են իշխանություն, զորություն, տերություն, պաշտպանություն, հարստություն. իսկ ներքին հատկությունք են արիություն, հարատևություն, չափավորություն և միաբանություն: Այս երկու ճամբեն ուրիշ միջոց մը գտնալ անհնար է. կամ գտնվածը այս երկուքին կվերածվի, և կամ այս երկուքին ընկերակցությամբ կբաղկանա:

Այսօր հայը կա, և քաղաքական ազգի մը սեփական կատարելությունները կցուցնեն: Այս իրական բան մըն է և ստույգ, ինչպես և ստույգ է որ արտաքին հաջողությամբ չէ որ մեք կրցած ենք այդ գոյությունը պահպանել, որ ինչչափ ալ ստորին և դժվարին ըլլա, տակալին յուր մեջ բավական բան մըն է, շատերուն նախանձելի և սոհասարակ ամենուն համար հուսացուցիչ: Եթե արտաքին հաջողությամբ չէ,—վասն զի ո՞ր են հայոց տերությունը, իշխանությունը, զորությունը, պաշտպանությունը և հարստությունը.—հարկ անհրաժեշտ է խոստովանիլ թե հայոց ներքին արդյունքն և արժանիքն են որ զինքը ազատեցին համայնաջինջ ձախորդությանց օվկիանին ալիքներեն, և ամենաձայն թշվառությանց զազանին ճանկերեն, և այդ ներքին արդյունք ալ յուր հոգվույն հատկությունք են. և ճշտիվ այն հատկությունք որոց գմեզ զուրկ դատեցին և կդատեն որք դեպք և օրենք իրարու կխառնակեն, և մասնավոր գործերն ընդհանուր հոգվույն պատկեր մը կուզեն ստեղծել: Ուրիշ ատթի մեջ ալ հայուն անցյալը քննեցի, և յուր պատմության վրա իմաստասիրելով հետև-

ցուցի եթե անհատական կատարելությանը նշանակ սի է հայության այժմյան դիրքը. և եթե ենք, ինչ որ ենք միայն այդ պատճառին համար որ յուրաքանչյուր հայ անհատ՝ լիովին ունեցավ այն իղձերը և զգացումները և ձիրքերը և կարողությունները՝ որովք յուրաքանչյուր ազգի բնական կյանքը կապահովվի: Ինչ որ այն առթին մեջ այսպիսի շրջաքանությանը բացատրել պարտավորյալ էի, այսօր ավելի համատոտությանը կանվանեն զայն հայության հոգին:

Բավական զննությանը մեջ մտանք, որով և կրցանք քանի մը նախադասություններ հաստատել հայության հոգվույն կերպարանին և յուր գործոց և յուր արժանաց վրա. սակայն դեռ մթին մնաց զանազան ծայրից իրարու համաձայնության կերպը և մեկնությունը, որպեսզի բնագնդին հետախույզը գտնա յուր մտաց հագուրդը, և անդատին հարմատի անդ ճանչնա թե՛ բարի և թե՛ չար գործոց ծագումը, կատարելությանը սկզբնապատճառը և թերությանը շարժառիթը:

Մարդկային ընկերությունը առհասարակ, որով անվամբ և կոչվին, ազգ կամ տերություն կամ եկեղեցի կամ աշխարհ, անհատից գումարումն են. և յուրաքանչյուր ընկերության հոգին անհատից մեծամասնության հոգվույն արտադրյալն է: Կան անհատք որք հասարակաբար սումամբ անձնական հատկություններ և կատարելություններն զուրկ են, կամ թե կատարելություններն զուրկ ալ չըլլալով այնպես աննշանակ բնավորության տեր են, որ գրեթե կոչնչանան և իբր թե զգոն երբ անձնական դիրքերնին կամ իրավունքնին կամ արդյունքնին ի յույս հանելու առիթ մը մեջտեղ կորվի: Իսկ ընդհակառակն կան ևս ընկերությունը որոց անհատք առանձնակի առյալք բավական ձիրքեր և կատարելություններ կհայտնեն, որով իրենք իրենց կըբավականանան. և որովհետև նաև անհատաբար հարգ կամ արժեք մը ունին, կըբաղձան, կձգտին և կպահանջեն իսկ որ ընդհանրության ընթացից և գործոց մեջ անհատից դիրք մը որոշվի և անձնուր գործնությանը ասպարեզը չփակվի: Մանավանդ որ ընկերությունը կամ ընդհանրությունը անմիջաբար անհատից միութենե չեն կազմվիր, հասպա մանր և ստորակարգյալ ընկերությանը միություն են, ինչպես ազգ մը որ ցեղերն և քաղաքներն կբաղկանա, պետություն մը՝ գավառներն և նահանգներն, և եկեղեցին ալ՝ զանազան աստիճանի վիճակներն և թեմերն:

Ընկերության ամբողջությունը սովորություն է շրջանակի մը նմանցնել, որո կերպունն է այն բարձր իշխանությունը որ ըն-

կերությունը կմիացնե. սակայն կեդրոնեն զատ ալ շտապիղներ կան, և ստունք ալ մասնավոր և ստորակարգյալ ընկերական շարունոց կամ մասանց օրինակներն են, որք ի կեդրոն անդ միավորյալք, սակայն ստանձնական դիրք է գործք և ասպարեզ ունենալե չեն դադիր: Այդ շրջանակի և կեդրոնի նմանությունը այնչափ սովորական էրա՞ծ է ընկերության նկատմամբ, որ նույն նմանության վրա հիմնելով անուն տրված է երկու տեսակ վարչության կամ մատակարարության՝ որովք ընկերությունը յուրաքանչյուր իրենց ներքին ընթացից և հարաբերությանը կանոնները կկարգադրեն:

Երբ կեդրոն կազմող բարձր իշխանությունը կտարածե ամենուրեք յուր ազդեցությունը և գործունեությունը՝ ստանց թույլ տալու մասանց և անհատից իրենց սեփական կարողությունը և ձիրքը գործածել, մասնավոր գործունեությանը առջև խրամներ և պատնեշներ կելլան, և ամենայն գործություն կաշկանդյալ կմնա, միայն կեդրոնականին թողլով խորհել և գործել և փորձել, այդ վարչության ձևը կեդրոնական կամ կեդրոնացուցիչ կըլլի: Հակառակն է, այսինքն արտակերրոնական է, երբ թող կըստրվի որ նաև մասնավոր գործությունը կարող ըլլան իրենց գործունեության ասպարեզ մը ունենալ: Հարկ չկա իսկ հավելու որ այդ մասնավորաց գործունեությունը չեն կրնար կեդրոնականին հակառակ կամ ներհակ ըլլալ, առանց ընկերության ամբողջության և միության վտանգ հասցնելու, և պետք է որ ամենն ալ կեդրոնին մեջ միանան:

Թե այդ երկու տեսակ վարչությանը ո՞րն արդյոք նախադասելի է, երկար վեճերու նյութ եղած է քաղաքագիտաց համար, և հավասարապես ասպացումամբ և հավանականությամբ երկու կողմերն ալ իրենց կարծիքը պաշտպանել կկարծեն, և պատանական դեպքերն իրենց իբր փաստ առնելով երկու կարծիքներն ալ անտեղություններ և զգուսներ հատաչ կը բերեն. և արդյամբ ալ պատմությունը երկու կարծիքներուն ալ թե՛ ի նպաստ և թե՛ հակառակ փաստեր կրնա ընձենել: Ես կըբեմ թե բնական օրենք է որ հավասարաչափ մեծության մարմին մը ավելի տոկուն է երբ զանազան մասերն ոլորած է. բաղկացած է, քան թե երբ միաձուլ և միապաղաղ մարմին մը ըլլա. այդպես զանազան մանր գավազանաց խորձ մը՝ միակտուր փայտի հետ բաղդատյալ, և զանազան երկաթ թելերն պարան մը՝ միաձուլ երկաթին հետ բաղդատյալ, տրամագծի հավասարությունը ճիշտ պահելով: Ինչ որ ալ ըլլա այդ նմանության փաստը, որովք արտակերրոնական ոճույն պաշտպանք իրենց կարծիքը կպնդեն, ես

կարծեմ թե բուն խնդիրը լուծելու հիմը հարաբերական է. այսինքն թե պետք է նայիլ ընկերության մը մասանց և անհատից կարողությանց և ձրից և զգացմանց, այսինքն է հոգվույն:

Եթե ունիս այնպիսի իմն ընկերություն՝ որո անհատք ո՛չ անհատական կատարելությունք հարուստ են, և ո՛չ անհատական իրավանց խափիլ նախանձախնդիր, հարմարեցո՛ր անոնց կեդրոնացուցիչ վարչություն մը, ոչ միայն այն է անոնց հարմարը և օգտակարը, այլ կրնամ իսկ ըսել թե այն իսկ է անոնց ուզածը: Խափիլ կեդրոնականությունը այնպիսյաց գորությունը կրկազմե, և գիրենք միաբանության մեջ պահելու կծառայե, մինչ մասնական և անհատական գործունեություն և իրավունք՝ մասերը կհեռացնեն, անտի անմիաբանություն, անտի լքումն, անտի իսկ ամենայն չարյաց և վնասուց աղբյուր: Այլ երբ ընկերություն մը ընդունակ է արտակեդրոնական վարչության, և մասեր և անհատներ կարող են իրենք իրենց բավականամալ ի գործ և հարդունս, այս առթի մեջ՝ հակառակը վնասուց աղբյուր է. որովհետև մասնական ձիրք և կարողությունք երբ ինքզինքնին ճնշուլ և անգործ կտեսնան, կսկսին կեդրոնական լուծի՞ն դեմ նշկահել բնական իմն բերմամբ, և կեդրոնին և մասանց հետ միաբանությունը կպակսի. և երբ այս կպակսի գորություն, արիություն և հարատևություն միանգամայն կանհետանան:

Մեք շատ բարձրացուցի՞նք հայերուն անհատական կարողությանց և հատկությանց արդյունքը. զոնե այս է իմ ներքին համոզողությունս, այս է իմ մտացս դատաստանը, որով շատ դժվարին խնդրոց լուծումը կգտնաս. և կհավելում իսկ թե շատ մտացի ազգայինք քան զիս իմաստունք, այդ կարծյացս իրավունք կու տան և զայն ընդունելի կդատեն: Քանի որ այս է իմ քննությանցս հիմը, ներեցե՛ք որ ձեր առջև առանց այլևս շրջաբանությանց մտնալու շիտկե շիտակ ըսեմ՝ թե այն թերությունք գորս հին պատմությունք և ժամանակակից հիշատակք հայության վրա կդնեն՝ իրենց արդարացումը կգտնան վերը բացատրված դրության մեջ. և հայոց անմիաբանությունք առավել

այն առիթներու մեջ նշանավոր եղան երբ հայության հոգվույն ներհակընդդեմ ո՞ն մը օտարաց դրոմամբ կամ զանազան պարագայից թելադրելովն, և կամ կեդրոնական իշխանության գլխույն սխալանք կամ կամակորությանը Հայաստանի մեջ հաստատելու փորձեր տեսնվեցան: Արշակունի թագավորաց վերջին ժամանակներուն մեջ, մարգարաններուն և ոստիկաններուն վարչության ներքև, և: Բագրատունի թագավորաց իշխանության ատեն, այդպիսի փորձերու շրինակներ պակաս չեն: Իրավ որ ժամանակակից պատմիչք խորհրդածությանց շատ հետամուտ չեն, մանավանդ թե յուրյանց գրությունք պակասավոր են ի մասին այն պարագայից՝ որոց վրա պատմության փիլիսոփայությունը կհիմնվի. միայն մեզի արտաքին դեպքերը և դժբախտությունները և ձախորդությունները կպատմեն. իսկ յուրաքանչյուր անձին գաղտնի դիտմանց, սկզբանց, նպատակին, հատկությանց և նմանօրինակ տեղեկությանց բավական մը տաղրություն չեն ըներ. որով և մեզ կարի դժվարին կ'ըլլա ըստ արժանվույն կշռադատել եղելությունքն. և երբ կուզեմք դժպրհի գործ մը քննադատել, չեմք կարող նշտությանը գտնալ թե ի՞նչ էր բուն պատճառը. ի՞նչ էր սկզբնական գործը. ի՞նչ էր յուրաքանչյուր անձին դիտումը, և թե հանցավորին քով գրգռող մը կա՞ր, կամ թե հանցավորը ի՞նչ սխալ կարծյաց մեջ կը գտնվեր: Քալ հի՞նե չար գործ մը արդարացուցանել, կամ անմիաբանության չարությունը նվազեցնել, և կամ տգեղ հանցանք մը գեղերեսել: Բայց երբ կտեսնամ թե հայոց և Հայաստանի թերությանց պատճառը սխալ գրություն մի էր, ինչո՞ւ զայն հարտնապես չգրուցեմ:

Հայրենասիրությունը կարարտավորե զմեզ ուղղակի թերությանց ալ մանրագնին քննությունը ընել, որպես զի երբ կտեսնամք թե անոնք հասարակ և գործողեն անկախ պատճառ մը ունին, նախ և առաջ սույն պատճառը բառնամք. և թերությունք ալ միանգամայն վերցվին:

(Ծարունակելի)